ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

27.06.2018թ. N 02/16.4/3013-18

«Հայաստանի Հանրապետության նախագծերի
պետական արտագերատեսչական փորձաքննություն»
փակ բաժնետիրական ընկերության տնօրեն
պարոն Գրիգոր ԱՐՇԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արշակյան

ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/8 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում <<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկի և <<Հայաստանի Հանրապետության նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> փակ բաժնետիրական ընկերության միջև 2018 թվականի մայիսի 24-ին կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-18/8 պետական գնման պայմանագրի 7.1-ին կետի երկրորդ պարբերությամբ սահմանված է, որ <<Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:>>:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալի 2018 թվականի հունիսի 18-ի N 03/26-1/11001-18 գրությունը (կցվում է) և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 16-ի N 1454-Ն որոշմամբ հաստատված <<Ընտրանքային կարգով պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերի և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջների գնահատման>> կարգի 10-րդ կետի պահանջով՝ <<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկը միակողմանի լուծում է վերը նշված պայմանագիրը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Արամ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ ԿԱ ՔՊԿ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական
և հաշվապահական հաշվառման վարչություն. Աշոտ Բաբայան
Հեռ: 011621727